



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առնոց օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաչքանիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիմնական պահանջ. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Երեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արեւելքի լուրեր. —Արաքսի լուրեր. —ՀԱՅԿԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ. Յովսէփ կաթողիկոս Արղուսեան:

ՀԱՄԱՐԱՅԻՆ ՊԱՆՈՒՆ

Հեռագրական տեղեկութիւնները մեր թերթը տեղեկութիւնները գիտեն, որ Լոնդոնում նոր տեղի ունեցած մի կարեւոր միջոցաւոր ժողով, որի ընտելութեան առարկան էր թոքախտի վարակիչ գիտական Բոբերտ Կոսի, որ շարունակում է զբաղվել թոքախտի բժշկութեան խնդիրներով, արտասանեց մի ճառ, որ պարունակում է իր մէջ հետաքրքրական կէտեր: Հիմնականում գիտութիւնների վրա, նա յայտնեց, որ թոքախտի դէմ մարտնչելու ամենապիտան միջոցներէն մէկն է բարեբեղ ազդարարական կեցութիւնը, տարով նրանք ընդարձակ բնակարաններ, որոնց մէջ լինի առատ մարուր օդ: Կոսի կարծիքով թոքախտը ժառանգական չէ, այլ նա զարգանում է որոշ պայմաններում, ուստի թոքախտաւորի զաւակները կարող են բուժորովին ազատ լինել այդ սարսափելի հիւանդութիւնից, եթէ իրանց կը շրջապատեն լաւ կենսական պայմաններով, կուսնան յարմար բնակարաններ և կը ստանան բաւարար անուէր: Թոքախտը, Կոսի կարծիքով, անցնում է մի մարդուց միւսին արտաթորանքների միջոցով, ուստի մի պէտք է միջոցներ ձեռք առնել հիւանդի արտաթորանքները կղզիացնելու և վարակելու հնարաւորութիւնից հեռացնելու:

Ձը հայելով, որ Անգլիան շատ խիտ բնակչութիւն ունի, այնուամենայնիւ այնտեղ թոքախտաւորների թիւը ոչ թէ չէ աւելանում, այլ օրէցօր զգալի կերպով նուազում է: Անորինակ չուքով կատարվեց այդ ճանապարհորդութիւնը: Փետրվարի 10-ին նա հասաւ Թիֆլիս Այգուեղ, Կոկիա գիւղում, նրան դիմաւորեցին վրաց արքայադուին, շրջապատված վրացի իշխաններով, ուս զօրքի հրամանատար երկու գնդերով, օֆիցէրները եւ ժողովրդի ահապին բազմութիւն: Բերդից սկսվեց ողջոյնի թնդանոթածգութիւն: Մեծ հանդէսով մտնելով հայոց եկեղեցին, կաթողիկոսը այնտեղից գնաց Սիւնի եկեղեցին, ուր դրված էր Գրիգորի թաւաւորի դազարը: Մուտն իջնելով նրա առաջ, կաթողիկոսը հեկեկալով փաթաթվեց իր բարեկամ թագաւորի դիակին: Ապա դիմելով ժողովրդի խումբ թագաւորին, նա վրացերէն լեզուով մի գեղեցիկ քարոզ ասաց, ողբաց Վերապահութեան թշուառութիւնները եւ յորդորեց յոյս դնել ուսուց կառավարութեան վրայ:

Մենք արդէն պատմեցինք, թէ ինչ դեր կատարեց Յովսէփ կաթողիկոսը Թիֆլիսում մի այնպիսի կարեւոր ժամանակ, երբ ուսուց տիրապետութիւնը էր հաստատվում, նկարագրեցինք այն չեղդ հանդէսը, որով նա տանց Պաւել կայսրի հրովարտեց փետրվարի 17-ին: Այնուհետեւ նա սկսեց պատրաստութիւններ տեսնել: Էջմիածին ուղեւորվելու համար:

Թիֆլիսում Յովսէփ կաթողիկոսը ապրում էր Մոզնու թաղում, իր եղբորորդի Սոթոմոն Արղուսեանի տանը: Նա որոշել էր ճանապարհովել մարտի 1-ին: Բայց գնացողը առաջ կամեցաւ լողանալ Թիֆլիսի ոչխարկած բաղնիքներում: Հերակլ թագաւորի այրին, Դարեշան թագուհին հրաւիրեց նրան գնալ իրան պատգանգ այնտեղ, երկար մնաց տաք ջրի մէջ, իսկ իրենապահին գնաց թագուհու մօտ թէյ խմելու: Գրիգորը նա սկսեց զոգացնել եւ պառկեց անկողնում: Մարտի 9-ին, գիշերը, Յովսէփ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Բանասէր» հանդէսի վերջին համարում, որ նոր լոյս տեսաւ, խմբագիր պ. Բաւմաշեան յայտարարում է, թէ ինքը ձեռնարկել է մի մեծ եւ կարեւոր երկասիրութեան պատրաստութեան:

Երկասիրութեան պիտի կրէ «Հայաբան» անունը եւ պիտի պարունակէ մեր բոլոր աւերակ եւ կանգուն յիշատակարանները: Վանքերը, բերդերը եւ ազգային ամեն տեսակ հուշիւնները, գեղարուեստական ու մանաւանդ ճարտարապետական մնացորդ-

ները, հին արձանագրութիւնները եւ ձեռագրաց — իսկ առիպ պատկերները, հանդերձ մանրամասն տեղեկութիւններով, նախաստական եւ պատմական ծանօթութիւններով եւ արձանագրութեանց ստույգ եւ անթերի հրատարակութեամբ:

Եթէ լաւ նայե՛ք այս խոստումներին, պիտի տեսնէք, որ մի մասնաւոր անհատի ոյժերից վեր է այդ ձեռնարկութիւնը, մի այնպիսի ձեռնարկութիւն, որ ուրիշ ազգերի մէջ գլուխ է բերվում գիտական ամբողջ արշաւանքների, ակադեմիաների ձեռքով, հաւաքական ոյժերով, դրամական մեծամեծ գոհորթութիւններով: Մեզանում չը կան այդպիսի հիմնարկութիւններ եւ սկզբունքներ, մեզանում ամեն մէկը ապրում է իր համար: Մնում է, ուրեմն, որ անհատները իրանց վրա վերցնեն այնպիսի վիթխարի ծրագրեր, որոնք ահապի ահապի զրկանքներով, տանջանքներով հետ են կապված: Եւ հայ անհատները, ի պատիւ իրանց, կարողացել են մեծ-մեծ գործեր կատարել: մեր գրականութեան պատմութեան մէջ այդպիսի օրինակներ քիչ չունենք: Այժմ էլ պ. Բաւմաշեանն է ուղղում մի անհեւա-կայելի մեծ բեռն տակ մտնելու ինչ միջոցներով է նա սկսում այդ մտադրութեան իրագործումը:

Ամեն տեսակ գոհորթութիւններու վարժ լինելով,—ասում է նա,—չարքաչալութեան եւ զօրաւոր կամքի վրայ միայն վստահ, առանձին, բայց միայն հայ ժողովրդի նիւթական աշակցութեան վրայ յոյս դրած, ձեռնարկած եւ պատրաստութեան «Հայաբան»-ը, որ իր մէջ պիտի պարունակէ աշխարհիս ամեն անկիւնը գտնուած հայկական արձանագրութիւններն ալ, յար եւ նման երօսպալան Ակադեմիաներու կողմէ հրատարակուած corpus-ներու:

Զոհողութիւնների վարժ, չարքաչալութեան եւ զօրաւոր կամքի վրա վստահ... Ահա պ. Բաւմաշեանի ամբողջ դրամագրութիւնը: Զինչ է, դրանք շատ լաւ, փորձված դէմքեր են, բայց այժմեան ժամանակներում ո՞վ է կարողանում դրանցով կուել ազգեւորների, դժուարութիւնների դէմ: Եւ մեր կողմից էլ կատարեալ անբարեխղճութիւն կը լինի տեսնել, թէ ինչպէս

մի մարդ մի լաւ գործի համար մերկ ձեռքերով, յոյս դրած լոկ իր մկանունքների ամբողջութեան վրա, աշխատում է մի մեծ սար ջանքերով,—տեսնել այդ եւ բաւականա՛յն հանդիսատեսի դերով: Պ. Բաւմաշեանն չէ էլ ուղղում այդպիսի հաճոյք պատճառով մեր անտարբեր հասարակութեան. նա ասում է, որ այդ գործի համար փող է հարկաւոր եւ դիմում է հասարակութեան աջակցութեան: Մինչեւ որ մի յայտնի գումար չը հաւաքվի, նա չը պիտի ձանապարհորդութիւն սկսէ՝ նիւթեր հաւաքելու համար: Եւ դա խելացի վճիռ է: Անցեալ տարի պ. Բաւմաշեանին հրաւիրել էին Էջմիածին՝ հապկոտական ուսումնասիրութիւններ կատարելու: Ընդունելով հայոց մայր աթոռի հրաւերը եւ ուղեւորվելով Կովկաս, պ. Բաւմաշեան, ի հարկէ, լիայոյս էր, թէ այդ աթոռը կը վարձատրէ իրան, գոնէ կը տալ իր ճանապարհածախսը: Այստեղից այնտեղից կօպէկներ հաւաքելով, նա հասնում է Էջմիածին, ամիսներով մնում է այդտեղ, բայց ոչ ոք չէ էլ մտածում նրա մասին: «Բարով եկար, բարով էլ գնատ»—այս է լինում Էջմիածնի ընդունելութիւնը: Լաւ որ պ. Բաւմաշեան չարքաչալութեան սովոր է, լաւ որ զրկանքներ տանել գիտէ: Էջմիածնի վարդապետները, օրինակ Թիֆլիսից Շուշի գնալու եւ վերադառնալու համար, ստանում են ճանապարհածախս երեք հարիւր ռուբլի: Պ. Բաւմաշեան դրա կէսն էլ չէ ստանում, թէեւ նրա ճանապարհը Պարիզից մինչեւ Էջմիածին էր եւ այդտեղից մինչեւ Պարիզ: Այդ դառն փորձը բաւական էր, որ պ. Բաւմաշեան այլ եւս դատարկ յոյսեր չը դնէ մարդկանց բարեխղճութեան վրա: Մինչեւ այժմ նա իր ճանապարհորդութեան համար հաւաքել է 220 ֆրանկ: Բայց դա քիչ է, այդքան փող Էջմիածինն էլ կարող է տալ: Հարկաւոր է, ուրեմն, հասարակութեան աջակցութիւնը:

«Բանասէր»-ն այն համարում տպված է պրոֆէսոր Ղուկաս Բաղրուպանեանի համառօտ կենսագրութիւնը՝ պատկերի հետ: Դա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԴՈՒԹԵԱՆ

Յովսէփը Պետերբուրգում էր գտնվում, երբ յայտնի դարձաւ, որ Բ. Դուրը ընդունել է նրա կաթողիկոսութիւնը: 1800 թվականի օգոստոսի 4-ին նա վերջին անգամ ներկայացաւ Պաւել կայսրին, հրաժեշտի ողջոյն տուեց եւ ապա ճանապարհ ընկաւ դէպի Աստարխան: Նրա հետ էր Յովսէփան Լազարեանը: Մոսկվայում նոր կաթողիկոսին մեծ պատիւներ արին. աւելի մեծ փառքով նա մուտք գործեց Աստարխան սեպտեմբերի 12-ին: Պաւել կայսրը նրա վրա թափեց իր ողորմութիւնները: Յովսէփը պատնում էր ռոսիկ 2000 ռուբլի, այդ ռոսիկը այժմ յատկացրվեց նրան մինչեւ մահ. ճանապարհի ծախսերի համար պետական գանձարանը բաց թողեց 1000 ռուբլի: Բացի այդ բոլորից, կայսրը յատուկ հրամաններ ուղարկեց կովկասեան բանակի զինաւոր հրամանատար Կնորրինգին՝ կաթողիկոսի ապահով եւ պատուաւոր ճանապարհորդութեան մասին հոգ տանելու համար: Աստարխանից մինչեւ Թիֆլիս Արղուսեանի ճանապարհորդութիւնը յաղթական գնացքի էր նման: Նրան ուղեկցում էին հարիւր կողակներ մի ուս օֆիցէրի հետ: Գնեւրալ Կնորրինգը զինաւորեց նրան Մոզգոլում եւ մի քանի օր մնաց նրա մօտ: Կովկասեան սարերով ապահովութեամբ անցնելու համար Կնորրինգը բանակցութիւններ էր սկսել լեւոնաբնակ ցեղերի հետ եւ նրանցից էլ պահակախումբ էր կազմել: Կաթողիկոսին ուղեկցելու համար:

Դեկտեմբերին զուրա գալով Աստարխանից, Արղուսեանը 1801 թվականի փետրվարի վե-

րբ բարձր պաշտօնին: Բայց կարող ենք հէնց այդ պատճառով ուրանալ այդ հոգեւորականի մատուցած ծառայութիւնները, գործարարած առաջին ջանքերը: Ընդունելով, որ Յովսէփի կաթողիկոսութիւնը մի մեծ սխալ էր, ընդունելով, որ փառասիրութիւնը շատ էր զարգացած նրա մէջ եւ այդ փառասիրութեան համար նա նոյն իսկ անվաղել քայլեր արաւ իր կենսի վերջում, մենք, այնու ամենայնիւ, պիտի խոստովանենք, որ դա մի բացառիկ անձնաւորութիւն էր XVIII դարում: Նրա գործերը այնքան շատ են, այնքան նշանաւոր, որ նրա մարդկային թուլութիւններին կարելի է եւ պէտք է ներողամտութեամբ վերաբերվել:

Վերջացնելով մեր խօսքը, պիտի կրկնենք այն, ինչ ասացինք ներկայ գործի սկզբում: Յովսէփի կաթողիկոս Արղուսեանի նշանակուելութիւնը մեր նորագոյն պատմութեան մէջ աւելի պարզ եւ լիակատար կերպով կորոյվի այն ժամանակ միայն, երբ կը հրատարակվեն նրա բոլոր թղթերը: Ներկայ մեր կենսագրութիւնը դեռ բոլորովին պարզ կերպով չէ գծագրում այդ նշանաւոր գործիչի դէմքը, չէ շօշափում նրա բոլոր գործերը:

Յովսէփը աւելի խոշոր անձնաւորութիւն է, քան երեւում է մինչեւ այժմ յայտնի վաւերագրերի մէջ: Մեր հոգեւորականութեան մէջ միայն Ներսէս Աղապարեանի է, որ նրա եռանդով, խելքով ու կարողութեամբ հռչակվեց քաղաքական, վարչական եւ մտաւոր առաջադիմութեան ասպարէզում:

Եւ սակայն Յովսէփը մոռացված է մեզանում: Նրա մահվան հարեւրամեակի առթիւ հայոց եկեղեցին նոյն իսկ մի հոգեհանգիստ էլ չը կատարեց...

ԼԵՕ

գործարարական շատ կան լողանալու համար եկող-ները՝ Սկզբում շատերը վախեցել էին մի քանի ռուսաց թերթիերում երեւցած լուրերից, թէ իբր «սալուլա» է երեւցել թէօգործարայի ծո-ւափում, լայց այդ լուրի ստուծիւնը չուտով յայտնվեց հւ այժմ ամենը անվախ մտնող և ոչ ծովու իջնալարի այս տարի սովորականինչ չէ

№ 7

ᠢ ᠨ ᠤ ᠯ ᠡ ᠭ ᠦ ᠰ ᠣ ᠷ ᠲ ᠤ ᠶ ᠤ ᠮ ᠤ

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.